ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/225 «15» 06 2026թ.

«Ռուբեն Անդրեասյան» ԱՁ
(ՀՎՀՀ 63197487)
ՀՀ, ք. Վանաձոր Ավետիսյան 17
էլ. հասցե. herminea85@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «Ռուբեն Անդրեասյան» ԱՁ-ի միջև 2026թ.-ին ապրիլի 9-ին կնքված «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-17-1» ծածկագրով պայմանագրի շրջանակում «Ռուբեն Անդրեասյան» ԱՁ-ն պետք է մատակարարեր ռուլոնով զուգարանի թուղթ, որի մատակարարումից վերջինս հրաժարվել է ՀՀ ՆԳՆ ներկայացնելով 09.06.2026թ. ՄԳ/202508-26 գրությունը:

Համաձայն ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգի 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից կիրառելով տուժանքի և տուգանքի մասին պայմանագրի դրույթները՝ համաձայն պայմանագրի 6-րդ կետի պահանջների՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձել տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով՝ 2 աշխատանքային օրվա նկատմամբ, որը կազմում է **4296** դրամ և տուգանք՝ պայմանագրի արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ **21480** դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և կատարողը խախտել է ապրանքների մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգի 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «Ռուբեն Անդրեասյան» ԱՁ-ի միջև կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-17-1» ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Ռուբեն Անդրեասյան» ԱՁ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 824 246 (ութ հարյուր քսանչորս հազար երկու հարյուր քառասունվեց) ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար 549 497 (հինգ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության N900008000664 հաշվեհամարին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «Ռուբեն Անդրեասյան» ԱՁ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Տ. ԵՆՈՔՅԱՆ
«15» 06 2026թ.
ք.Երևան

Կատարող՝ Է. Մնացականյան
Հեռ. 010-59-64-86